Կարգապահական գործ թիվ ԿԳ-15064

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 178-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/101-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԵՎԱԿ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Ալեքսանդր Սիրունյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով պատասխանող՝ փաստաբան **Սևակ Նազարյանին (արտոնագիր թիվ 1237)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի **2015 թվականի հունիսի 1-ի** տեղեկանքի համաձայն անդամավճարի գծով պատասխանողի պարտքը կազմել է **130.000** Հայաստանի Հանրապետության դրամ:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>

Պատասխանողի կողմից սահմանված անդամավճարը չմուծելու **2015 թվականի հունիսի 1-ին** վերջինիս նկատմամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի առաջին մասի 5-րդ կետի «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ և կարգապահական գործը հանձնվել է Խորհուրդ:

<u>3. Պատասխանողի բացատրությունները</u>

Պատասխանողը նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում այն, որ **2015 թվականի հունիսի 1-ի** դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է **130.000** Հայաստանի Հանրապետության դրամ, որը, չի վճարվել (հիմք՝ ՀՀ փաստաբանների պալատի **2015 թվականի սեպտեմբերի 28-ի տեղեկանքը**)

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանողի անձը դրական կամ բացասական բնութագրող ապացույցներ ձեռք չեն բերվել:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը ենթակա է կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ պարբերության և 19-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, ինչպես նաև «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի համաձայն փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, որոնք, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 7-րդ կետի համաձայն կատարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Նույն Կարգի 21-րդ կետի համաձայն փաստաբանի վերոհիշյալ պարտականությունը չկատարելն առաջացնում կարգապահական պատասխանատվություն:

Սույն կարգապահական գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ Պատասխանողը չի վճարել սահմանված անդամավճարը: Պատասխանողի անձը բնութագրվում է անդամավճարների գումարները պարբերաբար չվճարելով:

Պատասխանողի անձը դրական բնութագրող փաստեր գործով ձեռք չեն բերվել:

Նկատի և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասի 14–րդ կետով, 39-րդ հոդվածի առաջին մասով, 39.7. հոդվածի հինգերրորդ մասի 1-ին կետով, 39.9. հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի հինգերորդ մասի 1-ին կետով, Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Սևակ Նազարյանին (արտոնագիր թիվ 1237) մեղավոր ճանաչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման մեջ և նրա նկատմամբ կիրառել նկատողություն կարգապահական տույժը:***
2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուղարկել փաստաբան Սևակ Նազարյանին:***

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում և օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Ալեքսանդր Սիրունյան**